

## ԸՐԻԱԿԱ ՊԱՊԱԼ ԵՒ ԼԵՆԿԱՆ

(Մաքսիմ Դոյջկի)

Գետալաստի գալուն սպասելով, նրանք երկուսն էլ պառկել էին դեստափի փլուածքի ստուերում և լուռ, երկար հալում էին կուբանի արագանոս ու պղտոր ալիքներին, որոնք ծփում էին նրանց ոտների տակ, լենկան նիրհում էր, իսկ Արխիպ պապը կրծքի վրայ տաք, ճնշող ցաւ զգալով չէր կարողացել քնով անցնել, նրանց զղղղուած, վտիս կերպարանքները գետնի մութ շագանակագուն մակներւոլթի վրայ հազիւ երեսում էին իրրե երկու գնդակներ, մէկը՝ մեծ, միւսը՝ փոքր, նրանց լոգնութիւնից և տօթից խոնջացած, ալրուած ու փոշոտուած դէմքերը բոլորովին իրար էին ընկել նրանց մարմինները ծածկող ցնցոտիների թխակարմիր գոյնի հետ:

Արխիպ պապի ոսկրոտ երկար կերպարանքը ձիգ ընկել էր ափն ի վեր նեղ ժապաւէնի նման փոռուած աւազաշերտի վրալ, փլուածքի և գետի արանքում, իսկ նիրհող լենկան նրա կողքին կոլոլուել էր ինչպէս օղակ: Խոր ցնցոտիների մէջ նա նման էր մի կռացած ճիւղի, որին կտրելով խոր պապից՝ հին չորացած ծառից, գետի ալիքները բերել ձգել էին ալստեղ՝ աւազի վերաբ:

Պապը գլուխը արմունկին լենած նալում էր հանդիպակաց արեառ ափին, ուր շարքով իրարից հեռու բռւսած ուռենիների և թփերի մի կողմից դուրս էր ցցուել գետալաստի մեկ ծալը: Ակնտեղ լուռ էր ու դատարկի ձանապարհի գորշագոյն շերտը գետից անցնելով շարունակում էր ընթացքը դէպի տափաստանի խօրքը, ուր նա աչնպէս ուղիղ էր ու չոր և ախնպէս ճնշում էր պապին.

Նրա մթագնած և սառն աչքերը կարմիր ուռած կոպերով խղճալի կերպով բաց ու խուփ էին լինում, իսկ կնճիռներով ակօսուած դէմքը մարել էր ընկնող վշտի ու ցաւի արտալալ-

առոթեան մէջ, նա երբեմն զգուշօրէն հազում էր և անհանդիս կերպով թոռանը նալելով ծածկում բերանը ձեռքով շաղը խռապու էր ու խեղդիչ, ստիպում էր պապին տեղահան լինել և ամեն անդամ նրա աչքերից խոշոր կաթիլներ էր դուրս քամում.

Բացի ալդ հաղից և ալիքների հանդարտ ճղիւնից տափաստանի մէջ ոչ մի ծպտուն չէր լսւում, Գետի երկու ափին փռուած ալդ տափաստանը լախարձակ էր, թխակարմիր, արեակէ և միայն այնտեղ, հեռու հորիզոնի վրա ծերուկի աչքին հաղիւ տեսանելի, պերճօրէն ալեկոծւում է ցորենի ոսկէ ծովը, որին նալում էր վերնից ուղիղ՝ կուրացուցիչ պալծառ երկինքը. Այնտեղ դուրս էին ցցուել հեռու բարտիների կազմ կերպարանքները. թւում էր, թէ նրանք մերթ իշխում են, մերթ կրկին բարձրանում, իսկ երկինքը և նրա տակ ցորենը օրօրուում են բարձրանալով ու ցածրանալով... Կամ ամեն ինչ լանկարծակի թագնւում է անապատալին օդերնոյթի փալուն, արծաթեալ շղարշի ետեսում:

Ալդ շղարշը՝ պալծառ ու խարուսիկ, երբեմն օրօրուելով հոսում իշխում էր հեռուուց մինչև գետափ. ալդ միջոցին նա նմանուում էր երկնքից բղխած և հենց իրեն՝ երկնքի նման մաքուր ու անդորր մի կէտի, որը եկել էր կենդանացնելու տօթից խօնջացած դաշտավալրը. Բայց ալդ գետը շուտով աներնոյթանում էր...

Ալդ ժամանակ Արխիպ պապը, որ ինչպէս վելիկօրս տափաստաններում եղած չլինելով անծանօթ էր ալդ երեսլթին, քաղցից ճնշուած տրորում էր աշքերը և տխուր՝ մտածում իւր մասին, որ ալդ տօթը և տափաստանը խլում են նրա տեսողութիւնը, ինչպէս խլել են ոտների մէջ մնացած ոդի մնացորդները. առաջ հալրենիքում ալդ ոտները օրական կարողանում էին երեսուն վերստ անցնել, իսկ ալժմ դրա կէսը հաղիւ են անցնում:

Ալաօր նրա համար առանձնապէս վաս ու տաղտկալի էր քան երբ և իցէ վերջին ժամանակներս, նա զգում էր որ շուտով մեռնելու է և թէպէտ սառնօրէն և առանց երկար խորհելու էր վերաբերում դէպի ալդ նախազգացումը, իբրև դէպի մի անհրաժեշտ պարտք, անուամենալիւ նրան ցանկալի էր մեռնել հեռու, իւր հալրենի Օռլովեան նահանգում. բացի դրանից նրան շատ անհանգստացնում էր թոռան բա-

Նը... Բնչ կը պատահի արդեօք Լենկալին...

Օրական մի քանի անգամ նա առաջն էր գնում ալր հարցը և ամեն անգամ նրա ներսում մի բան կծկում էր, սառչում և նա ալնպէս վատ էր զգում իրեն, որ կամենում էր հէնց իսկոյն վերադառնալ տուն—Ռուսաստան...

Հենց ալդպիսի ժամանակներում նա լիշում էր Խրիմը, մերկ տափաստանները, բիրտ ու խստափիրտ չոբաններին, նրանց ահոելի դամփուներին, անպատկառ, ագահ թուրքերին և Տամանում նրան պատահած արկածը, որի համար փոքր էր մնում բանտ նստէր Լենկալի հետ միասին:

Եւ ալս բոլորից լեռող գնալ հեռու՝ Ռուսաստան... միենոյն է, չի կարելի տեղ հասնել. մինչեւ տեղ հասնելը մարդ ճանապարհին կը մեռնի մի տեղ. Ալսոնդ՝ Կուբանում առատ ողորմութիւն են տալիս. բոլորն էլ ուննոր մարդիկ են, թէն անտանելի և անպատկառ. Աղքատներին էլ չեն սիրում, ոռովհետեւ հարուստ են...

Լենկալի համար մի բան կարելի է խորհել. Միենոյն է, նա որը է՝ ալստեղ կամ Ռուսաստանում....

Եւ թոռան վրալ մի արտասուաթոր հալեացք ձգելով պապը իւր կոշտացած ձեռքով սկսեց շոկել նրա զլուխը.

Թոռը տեղից շարժուեց և մեծ-մեծ, խոր-խոր, ոչ-երեխայական կապուտ մտախոն աչքերը դէպի պապը դարձրեց. ալդ աչքերը առաւել ևս մեծ-մեծ էին երսում նրա նիհար, ծաղկատար փոքրիկ դէմքի վրա՝ սուր քթով, բարակ անարիւն շրթունքներով, որոնք ճաքճքուել էին տօթից և անապատալին քամուց.

—Գալիս—հարցրեց նա և ձեռքը վահանածն աչքերին զնելով, դետնին նաև որ, որը սառնօրէն արտացօլում էր արեգակի ճառագալթները.

—Զէ զալիս, դեռ ևս կանգնած է. Ինչու պէտք է գալ ալստեղ, քանի որ ոչ ոք չէ կանչում, իրեն համար կանգնած է... զանդաղօրէն ասաց Արխիպը շարունակելով շոկել թոռան զլուխը.

—Նիրհում էիր.

Լենկան գլխով մի անորոշ շարժում արաւ և մեկնուեց աւաղի վրա. Նրանք լուեցին:

—Լողալ գիտենալի կը լողանալի—երկար զետնին նալելով ասաց Լենկան, որի ձախը մի տարօրինակ խլութիւն ունէր և արտալալտութեամբ աղքատ էր.

—Չատ վարար է: Մեզանում արդպիսի գետեր չկան: Ինչու է արդքան շտապում: այնպէս է վաղում, կարծես ուշանալուց վախենում է:

Եւ Լենկան դժգոհ դարձրեց երեսը ջրից:

—Ակ թէ ինչ—ասաց պապը մտածելով.—թող գօտիներս արձակենք, իրարից կապենք, ոտքիցդ կը կապեմ, իսկ դու կը մտնես և կը լողանաս:

—Է՛,—լրջօրէն վրաւ բերեց Լենկան.—բան մտածեց. կարծում ես քեզ քաշ չի տալ, ինչ է: Երկսով միասին կը խեղղուենք:

—Ափի մօտ... Յիրաւի որ քաշ կը տալ: Տես հւա ինչպէս է փուռում: Գարնանը երեխ ափերից դուրս գալիս կը լինի... Արօտների համար էլ պատուհաս է, անծալը արօտներ...

Լենկան չէր ցանկանում խօսել, ուստի պապի խօսքերը անպատասխան թողեց, վեր առաւ մի կտոր չորտցած ցեխ և մատներով փշերից փոշի դարձրեց: Նրա դէմքը լուրջ էր, արտալատութիւնը կենտրոնացած:

Աչքերը սնեռած ինչոր մտածելով պապը նալեց թոռանը.

—Տես համարու ու միօրինակ ձայնով առաց Լենկան փոշին ձեռքերից թափ տալով. —Հող է, ափիս մէկը առաւ, տրորեցի ու փոշի դարձաւ —խղճուկ մասնիկներ, աչքով հազիւ տեռանելիու.

—Որ ինչ, հարցրեց Արխիպը և հազաց, արտասուտթօր աչքերով նալելով թոռան մեծ-մեծ, չոր փալլող աչքերին և նիհար, սուր դէմքին:—Ինչու համար ասացիր արդ—ամելացրեց նա հաղը վերջացնելով.

—Հէնց այնպէս... շարժեց գլուխը Լենկան, —ուզում եմ ասել, որ ալս բոլորը՝ աշխարհս փուչ է. նա ձեռքով շօշափեց գետինը:—Եւ ալդ փուչ աշխարհի վրալ է շինուած ամենքան... Քանի քանի քաղաքներ ենք անցել մենք: Զարմանալի է: Եւ որքան մարդիկ կան ալդ անդերում:

Եւ չկարողանալով ամբողջացնել իւր միտքը, Լենկան նորից լուռ մտածմունքի մէջ ընկաւ իւր շուրջը նալելով:

Պապն էլ փոքր ինչ լոեց. ապա մօտ սեղմուելով թոռանը, ասաց փաղաքանքով:

—Իմ խելքօս: Ճշմարիտն ասացիր, ամենալին ինչ փոշի է: Ա՛ քաղաքները, Ա՛ մարդիկ, Ա՛ ես ու դու—փոշի: Եւ Լենկա... եթէ դրաճանաչ լինէիր... շատ առաջ կերթալիր:

Ճիշտ հասակաւոր մարդու նման ամեն բան կշռադատում ես...  
Խեղճ ողորմնլի, Աստուծոյ զառը... Ի՞նչ կը վինի քո ճարը:

Պապը կրծքին սեղմեց թոռան գլուխը և համբուրեց:

— Սպասիր,— աղատելով զզզզուած մազերը պապի կոշտ,  
դողդողուն մատներից, փոքր ինչ կինդանութիւն ստացած  
կանչեց Լենկան.— Ինչ ասացիր. Փոշի, քաղաքները և բոլորը...:

— Ալսպէս է անօրինել Աստուած, աղաւնեակս, ամենալն  
ինչ հող է, իսկ ինքը հողը— Փոշի. Ալստեղ ամենալն ինչ մեռ-  
նելու է... Պրծաւ գնաց: Հէնց ալդ իսկ պատճառով մարդս  
պարտաւոր է ապրել աշխատանքով և խաղաղութեամբ. Հրէս  
ես էլ շուտով կը մեռնեմ...— տեղահան վինելով աւելացրեց  
պապը տիրութեամբ.— առանց ինձ ուր կերթաս:

Լենկան ալդ հարցը շատ անդամ էր լսել պապից և նրան  
շատ էր ձանձրացրել մահուան դիմացի մասին դատելը, ալդ  
պատճառով նա լուռ շուռ եկաւ, մի կտոր բանջար կտրեց,  
բերանը դրեց ու սկսեց դանդաղ ծամել:

Բայց դա պապի հիւանդոտ տեղն էր:

— Ինչու ես լուռմ. Ինչպէս կանես ուրեմն առանց ինձ,  
հարցրեց նա կամաց դէպի թոռը կունալով և կրկին հազարով.

— Մէկ անդամ արդէն խօսել ես ալդ մասին... շփոթուած-  
ու դժոն արտասանեց Լենկան աչքի տակով պապին նակելով.

Նրան դիւր չէին գալիս ալդ խօսակցութիւնները առա-  
ւել ես ալն պատճառով; որ մեծ մասամբ վէճով էին վերջա-  
նում. Պապը ամեն անդամ խօսում էր իւր մահուան մօտիկու-  
թեան մասին: Լենկան սկզբում լսում էր կենտրոնացած, վա-  
խենում ներկալանալիք նոր վիճակից, լաց էր լինում, բայց  
աստիճանաբար լոգնում էր և մի հակաղարձ ընթացք էր վրաէ  
հասնում. իւր մտքերին անձնատուր եղած նա ալլ նա չէր  
լսում պապին, իսկ պապը ալդ չէնկատելով բարկանում էր և  
սկսում խօսել, թէ նա՝ Լենկան լիմար է, չէ սիրում պապին,  
չէ գնահատում նրա հոգածութիւնը, վերջապէս ալն տեղն էր  
հասնում, որ լանդիմանում էր Լենկալին այն բանում, իբրև  
թէ սա ցանկանում է պապին աւելի շուտ մեռած տեսնել:

— Ի՞նչ ասացիր. 'Իու դիռ անխելք ես, չես կարողանում  
հասկանալ քո կեանքը: Քանի տարեկան ես: Ցան և մէկ տա-  
րեկան միալն: Եւ տկար ես, գործի համար անպէտք: Ո՞ւր  
կերթաս, ուր: Բարի մարդիկ կարծում ես կօգնեն: Եթէ փող-  
ունենալիր, կօգնէին քեզ ալդ փողերը ծախսելում, ալդ ալդ-

պէս է: Իսկ ողորմութիւն խնդրել ինձ՝ ծերունուս էլ քաղցր չէ, Ամէն մէկին խնդրիր, ամեն մէկին խոնարհուիր: Ե՛ւ հայ՝ հողում են, և ծիծաղում, և հալածում: Ի՞նչ, դու կարծում ես աղքատին մարդ են հաշում: Ոչ, տասն տարի է աշխարհք եմ շրջում, գիտեմ: Մի պատառ հացը հաղար մանէթ են գնահատում: Կը տալ և կը մտածի, որ խկոյն արքալութեան զըռները կը բացուին նրա առաջ: Ինչո՞ւ են շատ տալիս քո կարծիքով: Խիղճը հանգստացնելու համար: Լաւ իմացիր բարեկամ, նրանք խղճալուց չէ որ տալիս են: Կը խոթի մի կտոր, ալնապիսի մի կտոր, որ կարծես մարիցն է կորում: Կուշտ մարդը՝ գաղան է: Սրբէք նա չի խղճաւ քաղցածին, որովհետև չգիտէ թէ ինչ է քաղցած: Լուշտն ու քաղցածը՝ իրար թշնամի են: Խաւիտնան լուխտենից նրանք իրար իրրն աշքի փուշ կերւան: Հէնց ալդ պատճառով էլ անկարելի է որ նրանք իրար խղճան և հասկանան... Կուշտի համար՝ քաղցածը կամ ցեխը:

Պապը հետզհետէ լցւում էր չարութեամբ ու վշտով: Դրանից նրա շրթունքը դողդողում էին և ծերունական հանգած աշքերը արագ բաց ու խուփ էին լինում: արտևանունքների և կոպերի կարմիր շրջանակների մէջ, իսկ մագաղաթեաւ դէմքի կնճիռները աւելի լաճախ և արտալալտիչ կերպով էին լալտնեում:

Լենկան չէր սիրում նրան ալդ դրութեան մէջ և ինչ որ անորոշ բանից վախ էր զգում:

— Հիմա հարց եմ տալիս, Բնչպէս կը վարուս աշխարհի հետ, ՚ու մի տկար երեխալ ես, իսկ աշխարհք—գաղան: Նա քեզ մէկ անգամից կուլ կը տար: Իսկ ես ալդ չեմ ցանկանում: Ախր ես սիրում եմ քեզ, բալաս: Դու իմ միակն ես, նոյնպէս և ես՝ քոնը, ի՞նչպէս մեռնեմ: անկարելի է որ ես մեռնեմ, իսկ դու մնաս: Ում վրալ... Տէր Աստուած... ինչո՞ւ չսիրեցիր քո ծառալին... Ապրել անկարող եմ, իսկ մեռնել անկարելի է, որովհետև... երեխալին... պահպանել պէտք է: Եօթ տարի պահել եմ... ձեռքերիս վրալ, պառաւ ձեռքերիս: Տէր, օգնիր ինձ...

Պապը նստեց և լաց եղաւ, գլուխը դողդողուն ծնկների մէջ կախ քցելով: Նրա ուսերն էլ ցնցւում էին խոպոտ հեկեկանքից, որ անհաւասար դուրս էր հեղուում նրա հիւանդ կրծքից:

Գետը շտապում, վազում էր հեռուն և հնչուն ձաշնով

ափերին ծփծփում, կարծես կամենսում էր ալդ ծփանքով խլաց . նել ծերունու հեկեկանքը. Պալծառ ժպտում էր անամպ երկինքը իրենից ալրող տապ արտահոսելով և ժպտալով լուռ ականջ էր զնում պլատոր ալիքների խռովալով վշշոցին...

— Հերթք է, մի լար, պապի,— մի կողմ նալելով ինչ որ անհասկանալի խիստ տօնով մէջ ընկաւ լենկան և ջրակալած, մոռալլ դէմքը պապին դարձնելով աւելացրեց. — Զէ որ ալդ բոլորի մասին խօսել ենք. չեմ կորչիլ, ծառալութեան կը մըտնեմ մի գիմետուն, ինչ բանի էլ...

— Եը ծեծեն, — արտասուախառն ձախով արտասանեց պապը.

— Կարող է պատահել որ չծեծեն. ալդպէս և չեն ծեծիլ. — Փոքր ինչ զալրացած աղաղակեց լենկան. — Այն ժամանակ Բնչ կրինի. այն ժամանակ արդէն մէջդան դուրս կը գամ. այնպէս հեշտ էլ ամեն մէկի ձեռքին չեմ մնալ...

Ականեղ լենկան անհասկանալի կերպով լանկարծակի կանդ առաւ և մտախոհ լոեց փոքր ինչ ու կամացուկ ասաց.

— Թէ չէ վանք կը մտնեմ...

— Եթէ միալն վանք մտնէիր. — հառաչեց պապը փոքր ինչ կենդանութիւն ցուց տալով ու նորից սկսեց խռիսող, խեղաիչ ձախով հազար.

— Գետա—լա—ա—ստ, գետաա—ա .. Հէլ—օդը պատաեց մէկի հզօր կոկորդաձալինից.

Խօսակիցները ցնցուեցան և ոտքի ելան, հաւաքելով պարկը և մահակները.

Աւազի վրալով ականջ ծակող հռոռոցով առաջ էր զլորում մի երկանիւ սալը. Նրա մէջ կանգնած էր մի կազակ, բրդէ դլխարկը ծուռ՝ զլխին դրած, որ պատրաստում էր լորանջել լախ բաց արած բերանով օդ ներշնչելով, որից նրա լախն, դուրս ցցուած կուրծքը աւելի և դուրս էր պրծել. Նրա սպիտակ ատամները պալծառ փալլում էին սև միրուքի մնտաքսեալ շրջանակի մէջ, որը սկսում էր լախ բաց արած և երկար լառումից արիւնով լցուած աչքերից, կոճկարծակ շապկի և անփութօրէն մարմնի վրալ ձպած չուխալի տակից երեսում էր նը. ըա մազմացոտ և արևակէզ իրանը. Աւ նրա ամբողջ ամրակազմ և մեծ կերպարանքից, ինչպէս և մսոտ, չալ ձիուց, անհամաշափ մեծ ձիուց, նորնպէս և սալլից՝ բարձր, լախ երկաթօղերով—ալդ բոլորից կուշտութիւն, ոլժ, առողջութիւն և գիտակցութիւն էր արտափալլում:

— Ե՞ւ, հէկո...

Պապ ու թռու վերցրին գլխարկները և խոնարհ գլուխ տոռին:

— Բարի աջողում—կտրուկ խոռլ ձայնով ասաց նորեկը և գետի միւս ափին նալելով, որտեղից հանդարտ ու անփոլթ դուրս էր սահում ան գետալաստը թփերի միջից, սկսեց երկար դիտել մուրացիկներին—Ռուսաստանցի էք...

— Ալնտեղից ենք, ողորմած մարդ — ողջունելով ասաց Արխիպը,

— Ալնտեղ սովէ է, համ:

Նա դուրս ցատկեց սալլից և սկսեց երգի ձայնով մի քան մըմռալ:

— Ցեցերն էլ սովից մեռնում են.

— Համ—համ, ցեցերն էլ մեռնում են, նշանակում է փըշ-քանք էլ է չի մնացել, բոլորը կերել են: Մանգալում ճար-պիկ էք. բայց ինչպէս երևում է աշխատել չէք սիրում: Եթէ մարդ լաւ աշխատէ, սովէ չի լինի:

— Ակտտեղ, աղա, գլխաւոր պատճառը հողն է: Կանգ-նում է ու չի բերում: Երկրի ամբողջ հիւթը դուրս ենք ծծել:

— Հողը,—Բախտուց զլուխը կազակը.—Հողը միշտ պար-տաւոր է պտուղ տալ. հենց դրա համար էլ նա տրուած է մարդուն: Ասա ձեռքերը և ոչ թէ հողը: Ձեռքներդ վատ են: Ալ—համ. լաւ լաւ ձեռքերից քարն էլ չի պրծնիլ, կը ծնի: Զէրնօմօրիալում եղթլ ես: Ալնտեղ, ափն., քարերն էլ հեր-կում են:

Գետալաստը հասաւ:

Նրկու առողջակաղմ, կարմրերես կազակներ, որոնք սա-ռը-սառը հաստ ոտները գետալաստի լատակին դէմ տալով դէպի ափ էին հրում նրան, ձեռքերից բաց թողեցին թոկը և իրար երեսի նալելով սկսան երկար շոնչ առնել:

— Շոգ է—բաց արաւ ատամները եկուորը ձին գետալաստ հանելով և ձեռքով զիխարկը ուղղելով:

— Ալ-համ—ասաց լաստավարներից մէկը ձեռքերը վար-տիքի գրաբանները խրելով և սալլին մօտենալով: Նա սալլի ները նալեց և ուժգին օդ ներշնչելով քիթը ձեռքով շփեց: Միւսը նստեց լաստի լատակին և անքալով սկսեց կօշիկը հանել:

Պապը և Լենկան լաստը բարձրացան և կազակներին նալելով վանդակապատին լենուեցան:

—Դէ գնանք, կարգադրեց սալլապանը:

—Հետդ խմելու բան չունիս. — հարցրեց սալլի ներսը նալողը:

Կօ;իկ հանողը վերջացրեց իւր զործը և անհասկանալի կերպով աշքերը սենելով նալեց սաքի սրունքին:

—Ոչինչ չունիմ, ի՞նչ է, միթէ կուբանում քիչ ջուր կար:

—Զուր... Աս ջրի մասին չէի հարցնում:

—Ալ արագի մասին, Արադ չեմ վերցրել:

—Սուր ինչպէս է որ չես վերցրել — մոածեց հարցնողը աշքերը լաստի լատակին լառելով:

—Դէ գնանք:

Կազմակը սկսեց հագնել կօշիկը, Միւսը ձեռքի ափում թքեց և բռնեց թոկը, Եկուսը սկսեց նրան օգնել, որպէս զի գետալաստը բարձրանալ և տեղահան լինի:

—Իսկ դու, ափու ջան, ինչու չես օգնում. — դարձաւ դէպի Արխիպը կօշիկով զբաղուած լաստավարը:

—Ի՞նչպէս կարող եմ, բալաս, —խղճալի ձալնով և գլուխը ճօճելով ձայն տուեց նա:

—Եւ չպէտք է էլ օգնել նրանց, նրանք մենակ էլ եօլակ կերթան:

Եւ կարծես ցանկանալով ափուին ցոլց տալ իւր խօսքերի իրաւացիութիւնը, նա ծանր ծանր ծալեց ծնկները և մեկնուեց գետալաստի տախտակամածի վրալ:

Ընկերը ծուլօրէն հակնուեց նրան և անպաշտպան մնալով տախտակամածին թիկն տուած սկսեց ոտնահարել լատակիը:

—Տեսնում ես, Լենեա, ինչպիսի մարդիկ են, մեծ-մեծ, կուշտ, Աս երկիրը շինականի համար արքալութիւն է... շնչաց Նրիխպը թեքուելով դէպի Լենկան, որ լաստի եղերքից նալում էր ջրին:

Դանդաղ առաջ գնալու միջոցին գետալաստը ցնցում և օրօրում էր իւր կողքերին զարկուող իուլ հոսանքներից ծեծուելով:

—Հրէն տես ինչ վարազն է, հաւ Ասում է՝ «ձեռքերը... վատ էք բանում», իսկ ինքը երազումն էլ չի տեսել ալնալսի աշխատանք—շնչում էր պապը. — Ինչու Աստուած մէկին շատ է տալիս, միւսին՝ քիչ... — և փոքր ինչ լուելուց լետով, կարձես Լենկալի պատասխանին սպասելով, ինքն իրեն պատասխանեց. - հոգիները փորձելու համար, Ո՞ր հոգին չի տրտնջալ.

և կը կորչի առանց կեանքի մէջ ուրախութիւն ու հանգիստ վալելելու.

Զրին նաև լով լենկան զգում էր, որ ախորժելի կերպով դրսիւը պատուում է և ալիքների արագ վաղքից լոգնած աշքերը նինջանար են եղել.

Պապի խուլ շնչոցը, թոկի շաշիւնը և ալիքների հիւթալի ծփանքը նրան աւելի ևս օրօր էին ասում. նինջ լոգնածութեան մէջ նա կամենում էր մեկնուել տախտակամածի վրա և լանկարծակի անպէս օրօրուեցաւ, որ ընկաւ.

Աչքերը լայն բաց անելով նա չորս կողմը նախց. Նրանով ծիծաղում էին կաղակները, գետալաստը գէպի ափի արեակէղ փրփուրը տանելով.

— Ի՞նչ է, քննով էիր անցել, Խեղճ տկար, Նստիր սալի մէջ, կը տանեմ մինչեւ առաջիկաէ ստանիցան, Դու էլ նստիր, ափու.

Շնորհիւ կաղակի՝ պապը միօրինակ, անդիւրալի տնքոցով սալլ բարձրացաւ, լենկան էլ վեր ցատկեց և նրանք գընում էին սե մանր փոշու քուլաների միջով, որ պապին ալպէս թէ ալնպէս շնչասպառ էր անում հաղից.

Կաղակը մի երգ սկսեց, նա երգում էր տարօրինակ հընչիւներով, ձայները մէջ ընդ մէջ կտրատելով և վերջացնելով շվոցով. Նրբեմն երգի ձայնով սկսում էր մի խօսք և ընդհատելով շարունակում կեղծ ձայնով (ֆալլուեր), կարծես նա մի կծիկ էր ևտ տալիս և հանգուցի պատահելով՝ թելը կտրում:

Նրգը բուլորովին ներդաշնակում էր տափաստանի հետ, որը նոյնպէս միօրինակ էր և կտրտուած օղում գալարուող կրկներնելթների շերտերով.

Անիւները ծոնչում էին խղճալի ձայնով. Փոշին մլլում էր, Պապը չէր դադարում երերալով հազարուց, իսկ լենկան մտածում էր, թէ ահա ստանիցա կը հասնեն, ուր զզուեցնող ձայնով պիտի երգէ պատուհանների տակ՝ Տէր Յիսուս Քրիստոս.... նորից ստանիցալի երեխաները պէտք է հաւաքուեն զիլին, իսկ կանալք պիտի ձանձրացնեն իրենց հարց ու փորձով Ռուսաստանի և ալլ բաների մասին... Ցանկալի չէ ալդ միջոցին տեսնել և պապին, որը ալդ ժամանակ աւելի լաճախ է հազում և աւելի կռանում, կծկում—մի բան, որ իրեն՝ պապին էլ ախորժելի չէ և ցաւ է պատճառումնրան. նա խօսում է մի ալնպիսի խղճալի ձայնով ալստեղ ու ալստեղ հե-

ծեծալով և որ և է բան պատմելով, որ ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չէր լսել... Ասում է, օրինակ, որ Ռուսաստանում, մարդիկ մեռնում են և թափթփուում փողոցներում և ոչ ոք չկալ որ դիակները հաւաքէ, որովհետեւ բոլորն էլ քաղցից սառց են կարել. Պապի հետ միասին նա ոչ մի ալղակի բան չէր տեսել ոչ մի տեղ, Բայց ալդ բոլորը պէտք էր տսել, որ պէս զի շատ տալին, Բայց ալստեղ ինչդու է պէտք ալդ ողորմութիւնը. Տանը—անտեղ կարելի է ծախել փութը քառասուն կամ լիսուն կրպէկով, իսկ ալստեղ ոչ ոք չի առնում. Նոյն իսկ երբեմն պէտք է լինում ալդ կտորտանքը, լաճախշատ համեղ, պարկից դաշտի մէջ թափել, և ինչդու պապը ալդ պէս երես է առել և թափառում է մի ստանիցալից միւսը. Գոնէ մէկում մի շարաթ դադար առնէր, թէ շէ շրջում է, հաւաքում և առաջ անցնում ինչպէս հետապնդումից խուսափող գողի. Մէկ անգամ Լենկան խօսեց նրա հետ արդ մասին և նա պատասխանեց բարկացած և վշտալից.

—Դու անմիտ, լսի, հասկացիր! Դու չես կարողանում հասկանալ, թէ որքան եմ ես մտածում քո մասին. Ինչ ես եմ ցանկանում, դու չես կարող հասկանալ իս, ես թերես քեզ համար ըախտաւորութիւն եմ որոնում, գիւղական կեանքից քեզ ազատել կմ ցանկանում.... Ալղակս, լսիր, հասկացիր, դրա համար:

—Հաւաքե, ու եք զնում—դարձաւ դէպի նա մի կազակ, ուսերի վրալից նալեռով նրանց կծկուած կերպարանքին,

—Ի հարկէ, իմ բարերարս—հառաչելով պատասխանեց Արխիալ պապը:

—Ոտքի կանգնիր, ափու, ցոլց տամթէ որտեղ եմ ապրում. գիշերը ինձ մօտ կը լինիք.

Պապը փորձեց վեր կենալ, բայց ընկաւ. Նրա կողքը սալլի ծալրին զարնուեցաւ և նա սկսեց խուլ ձախով հեծեծալ:

—Ել դու հալիւոր—մըթմըթաց կազակը ցաւակցելով.— զէ միննոյն է, մտիկ մի արա, ժամանակին կը զաք գիշերելու. Կը հարցնես Սեին, Անդրէլ Սեին, ալդ ես եմ որ կամ. Իսկ հիմա ցած իջիր, մնաք բարեւ.

Պապ ու թռո մնացին մէն-մէնակ մի խումբ բարդիների և սօսիների առաջ. Նրանց բների միջով տներ, ցանկապատեր էին երեսում ամեն կողմ—աջ ու ձախ - երկինք էին բարձրանում խոտի դէղերի. Մասերի կանաչ սաղարթը ծածկուած էր մոխրա-

գոյն փոշիով, իսկ հաստ, ուղղաձիգ բների կեղևը ճեղքնը՝ քուած էր.

Ուղիղ մուրացիկների առաջ տախտակապատերի միջով մի նեղ փողոց էր գնում, ուր արդէն աներենոլթացել էր նրանց բերող կազակը. նոյն ուղին բռնեցին նրանք երկար ճանապարհորդած մարդու լոգնած, անկալուն քալուածքով:

—Դէհ, ինչպէս գնանք, Լենկա,—միասին, թէ ջոկ-ջոկ.— Հարցրեց պապը և պատասխանին չսպասելով աւելացրեց.— Միասին աւելի լաւ կըլինէր, միայն թէ քեզ շատ քիչ են տալիս. Դու չդիտես խնդրել...

—Ինչներին է պէտք շատը. միենոյն է, բոլորը խօ չի ուսուիլ... լոնքերը կիտած պատասխանեց Լենկան չորս կողմը նաւելով:

—Ինչներին, անմիտ: Յանկարծ մէկը կը պատահէ և կը զնէ: Աւ թէ ինչ. Փող կը տակ. իսկ փողը՝ մեծ բան է: Փողատէր լիսելով ալնպէս հեշտութեամբ չես կորչիլ ինչպէս ահա ես եմ մեռնում:

Սւ փաղաքշաբար ժպտալով պապը սկսեց ձեռքով թռան դլուխը շուել:

—Գիտես, թէ որքան հմ ժողովել ալս շրջակալութեան ընթացքում, հա.

—Ո՞րքան, սառնօրէն հարցրեց Լենկան:

—Տասնեմէկ ու կէս... Տեսնում ես:

Բայց Լենկալի վրայ ոչ մի տպաւորութիւն չգործեցին ոչ ալդ զումարը և ոչ պապի ցնծալի տօնը:

—Աւ զու երեխալ, երեխալ, հառաչեց պապը.— Հը, ուրեմն ջոկ-ջոկ գնանք.

—Ջոկ-ջոկ.

—Դէ, դէպի եկեղեցի կը գաս:

—Լաւ.

Պապը ծոռւեց դէպի ձախ՝ նրբուզին, իսկ Լենկան շարունակեց նոյն ճանապարհը: Տասն քալլ անցնելով նա լսեց դողդոջուն կոչը. «Ովք բարերար և ողորմած մարդիկ...» Ալդ կոչը կարծես տաւիդի աններդաշնակ՝ հաստ ու բարակ լարերը ձեռքի ափով շփելուց էր լառաջ գալիս: Լենկան սարսուռ զբաց և մի քալ արեց: Ամեն անգամ պապի խնդրուածքի ձախը լսելիս անախորժութիւն և վիշտ էր զզում նա, իսկ երբ մերժում էին նրան մինչև անգամ վախենում էր, սպասե-

լով որ ահա արն բոպէին պապը արտասուքների մէջ կը հեղէղուի:

Դեռ ևս նրա ականջին էին հասնում պապի ձանի դող-դողուն, խղճալի նոտերը, որոնք ոլորում էին ստանիցալի ջերմ ու թմբեր օղում. Շուրջը խաղաղ էր ինչպէս գիշեր, կեն-կան մօտեցաւ ցանկապատին և նստեց կեռասենու փողոց դուրս նկած ճիւղերի ստուերում. Որտեղ որ խուլ բզզում էր մեղուն:

Ուսից պարկը վեր առնելով, կենկան գլուխը նրա վրայ դրեց և առ վալլը մի երկնքին նալելով ծառերի ճիւղերի մի-ջով, խոր քուն մտաւ, թագնուած անցորդների աչքից բան-ջարներով և ցանկապատի վանդակիանման ստուերով.

Նա արթնացաւ իրիկնադէմի թարմ օդի մէջ տատա-նուող տարօրինակ հնչիւններից. Ով որ լալիս էր նրանից ոչ ալնքան հեռու, լացը նման էր երեխալի խռոված և անհան-դիստ լացիւ. Հեծկլտանքի ձալները հանգում էին նուրբ, ցածր նոտալով և լանկարծ կրկին նոր ուժով բռնկւում, ու սահում աւելի և աւելի մօտենալով նրան.

Նա գլուխը բարձրացրեց և բանջարների միջով նալեց ճանապարհին:

Ալդ ճանապարհով գալիս էր մի եօթ տարեկան աղջիկ, գեղեցիկ, մաքուր հազնուած, կարմիր ու լացից ուռած երե-սով, որը երբեմն սրբում էր սպիտակ չթէ շրջազգեստի ծալ-րով, նա դալիս էր դանդաղ, բոբիկ ուռները ճանապարհին գետնին քսքսելով, բարձր փոշի բարձրացնելով և անշուշտ չիմանալով՝ թէ ուր է գնում և ինչի, նա ունէր մեծ-մեծ սև աչքեր, ալժմ վիրաւորուած, թախծալի ու թաց և փոք-րիկ, նուրբ, գարդագոյն ականջներ, որոնք ալնպէս չարաճճո-րէն դուրս էին պրծել շագանակագոյն մաղերի հիւսքերի մի-ջից, որոնք գզզուած թափուել էին նրա ճակատի, թշնրի և ուսերի վրալ:

Ընդհանուր նալուածքից նա կենկալին շատ ծիծաղելի էր թշում, չնալելով արտասուքներին—ծիծաղելի և ուրախ, Աւ պէտք է որ չարաճճիի մէկը լինէր...

Թարգմ. Ա. Գևանձեցեան

(Վերջը միւս անգտմ)